

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն Արմավիրի մարզում տրամադրել է 85 վարկ` 326,6 մլն. դրամ արժողությամբ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանն Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի ուղեկցությամբ, օգոստոսի 3-ին աշխատանքային այցով եղել է Արմավիրի մարզում: Ինչպես



[NEWS.am](http://www.news.am)-ը տեղեկանում է տարածքային նախարարության մամուլի ծառայությունից, այստեղ «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակում «*Ֆարմ Կրեդիտ Արմենիա*» կազմակերպությունը ֆերմերների աջակցության ծրագրեր է իրականացնում: Արմավիրի մարզ են այցելել նաև ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչը, «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի տնօրեն Ալեքս

Ռասինը, «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Հայթաղ, Առատաշեն համայնքներում հյուրերը ծանոթացել են ծրագրի շահառուներ Արամայիս Մելքոնյանի, Վահրամ Հարությունյանի տնտեսություններին, զրուցեց լիզինգով տրակտորներ ձեռք բերած գյուղացիների հետ: «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» կազմակերպության աջակցությամբ Արամայիս Մելքոնյանը կառուցել է 1067 քմ ապակեպատ ջերմոց` ծաղկաբուծությամբ իր համար ապահովելով կայուն եկամուտներ: Այժմ ցանկանում է անցկացնել կաթիլային ոռոգման համակարգ, ինչը հնարավորություն կտա ջերմոցից ավելի վաղ բերք ստանալ: Ծրագրի շահառուներից Վահրամ Հարությունյանին կազմակերպությունը հնարավորություն է տվել հիմնել ևս 8 հա խաղողի այգի` ընդլայնելով սեփական միջոցներով հիմնած 24 հա այգին:

Արմեն Գևորգյանը կարևորել է գյուղական տնտեսությունների աջակցության ծրագրերը գյուղական զբաղվածության մակարդակի, շուկայում տեղական

գյուղերի մրցունակության բարձրացման առումներով, նշելով, որ դրանք առաջին հերթին նպաստում են գյուղական բնակավայրերի զարգացմանը:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» կազմակերպությունն Արմավիրի մարզում տրամադրել է 85 վարկ՝ 326.570.000 ՀՀ դրամ արժողությամբ, որից՝ ՀՄՀ-Հայաստան «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում՝ 63 վարկ: Կազմակերպության կողմից ֆինանսական վարձակալությամբ տրամադրված 33 տրակտորներից 12-ը հատկացվել է Արմավիրի մարզի գյուղերին: Ծրագրի շրջանակում մարզում կառուցվել են ջերմոցներ, չորանոցներ, սառնարաններ, հիմնվել են այգիներ, լիզինգով տրամադրվել է գյուղտեխնիկա:

Փոխվարչապետը ծանոթացել է նաև «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի 3-րդ կարգի ջրագծերի վերականգնման 1-ին փուլով Հայթաղ համայնքում իրականացվող ջրագծերի վերակառուցման շինարարական աշխատանքներին:

<http://news.am/arm/news/26800.html>